Աւելորդ չի լինի մեր կուրացած հայակերներների համար,—եթէ ոչ արդարության զգացմունքից, գոնէ Ռուսաստանի չահերի տեսակէտից աւելի հանգիստ եւ խելացի կերպով քննության առնել հայերի դրությունը եւ դերը Կովկասում եւ Անդրկովկասում։ Այդտեղ մինչեւ անգամ գիւղ անելու կարիք չը կայ։ Այն բանի վրա, ինչին նոր միայն ձգտում է Գերմանիան, վաղուց արդէն ընկել է Պետրոս Մեծի արծուային հայեացքը, որը լաւ էր հասկացել, թէ անկարելի է իրագործել Ռուսաստանի համաշխարհային կուլտուրական միսսիան Արեւելքում, եթէ նայելու լինի իրերի վրա «Մոսկովեան բացառականության եւ անհամբերողության» նեղ ճեղքով։ Մահմեդական աշխարհի դէմ կուելու համար նա, որպէս բնական դաշնակիցների, հրաւիրեց Արեւելքի միակ քրիստոնեաներին—պարսկա-հայերին, որոնք առաջինն էին, որ առեւտուր սկսեցին Կասպից մահմեդական ծովափի վրա։ Նոյն բանն արեց եւ Եկատերինա II Սեւ ծովի մահմեդական ծովափի վերաբերմամբ, ուր հրաւիրվեցին երկրագործներ եւ վաճառականներ Թիւրքաց Հայաստանից։ Մի խօսքով, թէ աւելի հեռաւոր, եւ թէ մերձաւոր պատմությունը ցոյց է տալիս, որ Ռուսաստանը ցանկացած ժամանակ կարողանում էր հայերին օգտակար եւ հաւատարիմ հպատակներ դարձնել եւ իր ազդեցության տարածողներ Արեւելքում։ Եթէ նրանք մի եւ նոյն ժամանակ պահպանեցին իրանց կրօնը եւ մասամբ լեզուն, դրա մէջ միայն չարասիրտ եւ կուրացած ցեղային անհամբերողությունը կարող է ինչ որ վնասակար եւ մինչեւ անգամ Ռուսաստանի համար վտանգաւոր մի բան տեսնել. Ինչ վերաբերում է ռուսաց լեզուի նշանակությանը, չը խօսելով արդէն ունեւոր դասակարգերի մասին, որոնցով լցված են բոլոր գպրոցները Կովկասի քաղաքներում, հայերի մինչեւ անգամ նորագոյն սերունդների ստորին դասակարգերը բոլորը մի փոքր խօսում են ռուսերէն։

Գիւղերում, գպրոցների պակասության պատճառով, ռուսաց լեզուն աւելի քիչ է տարածված, իսկ այժմ հայոց ծխական գպրոցների փակվելուց յետոյ 1896 թվին, որտեղից 20,000-ից աւելի երկու սեռի ուսանողներ հեռացրվեցին, ռուսաց լեզուի տարածումը, ի հարկէ, պէտք է դանդաղանայ, եւ ոչ թէ արագացվի, որի համար անկեղծ կերպով ցաւում են հայերը։ Կովկասը լաւ ճանաչողներից մէկը հաւատացնում էր, որ եթէ մինչեւ անգամ հայերին արգելէին ռուսաց լեզուի ուսումնասիրությունը, նրանք գաղտնի կերպով կը սովորէին, այնքան զօրեղ է նրանց մէջ պետական լեզուի գիտության անհրաժեշտության եւ օգուտի համոզմունքը։ Եւ ահա այդպիսի արթուն գործնական—հայերին Կովկասի նորայայտ ճանաչողները համարում են ռուսաց լեզուն սովորելուց խուսափողներ միայն այն պատճառով, որ գիւղական ազգաբնակության մասսան (ինչպէս յայտնի է, Կովկասում հայոց ազգաբնակության 80 տոկոսից աւելին գիւղացիներ են) չը գիտէ ռուսերէն, որովհետեւ ինչքան էլ նա ցանկանայ, տեղ չունի սովորելու, գպրոցների բացակայության պատճառով։

Ժամանակ է, ժամանակ ազգաբնակության համար կարգադրել վերջին ժամանակների տարաձայնությունները, որոնց եթէ չեն ստեղծել, գոնէ սաստկացրել են կարճատես բուտինէօրպաշտօնեաները եւ Վելիչկի նման հայատեաց հրապարակախօսները, որոնք քիչ վնաս եւ վիշտ չեն պատճառել հայերին եւ ոչինչ օգուտ չեն տուել Ռուսաստանին։ Այդ չարավնաս մաքուղի ցրվելը պահանջում են թէ արդարությունը եւ թէ Ռուսաստանի օգուտը։

Գր. Ա. Միրօվ

«С. Петер. Вѣд.»

բան ա—ապեկի թուղթ ա» եւ գիւղացին, որ համախօսականը ստորագրելու ժամանակ մի տեսակ երկիւղ է զգում, «ապէկի» անունը լսելիս, իսկոյն համաձայնվում է ստորագրել։ Ընտրված խնամատարը, լինի դա նոյն-իսկ որբի բարեկամը կամ ազգականը՝ իր ձեռքն է հաւաքում նրա բոլոր թէ չարժական եւ թէ անշարժ կայքը ու իր սեփականի պէս տիրապետում։ Աստուած թող միայն խնամք համարէ այն դաղրն օրերը ու ցաւերը, որ խնամատարը չէ զլանում իր սանիկին զգալ տալ...

Օրէնքով խնամատարը պարտաւոր է միշտ հաշիւ ներկայացնել գիւղական ժողովին իր յանձն առած որբի ունեցած ել եւ մուտքի մասին. սակայն ով է պահանջողը։ Տանուտէրը, որ ժողով հրաւիրողն է՝ աւելորդ գլխացաւանք է համարում ու այդպիսի մանր բաների համար ժամանակ չունի։ Վերջը այն է լինում, որ խնամված որբը, հասակն առնելուց յետոյ, ոչ միայն հօրից մնացած ժառանգութիւնից է զրկվում, այլ եւ տէր է դառնում իր խնամատարի արած պարտքերի...

Բայց քանի-քանիսները մնում են անխնամ, յանցաւոր լինելով միայն նրանում, որ իրանց հօրից ոչինչ չեն ժառանգել, որ գոնէ պատճառ լինէր խնամատար ճարվելուն—ահա այդպիսիների գրութիւնը տրդէն անտանելի է։ Անցեալներում տեղի ունեցած մի ոգեղ դէպք, կարծես մի զարհուրելի բողոք լինի այն կարգ ու կանոնների դէմ, որով ընթանում է մեր գիւղերում խնամատարութեան հարցը եւ գուցէ այդ փաստը տեղի չունենար, եթէ մեր գիւղերում եւս գործադրվէր այն գեղեցիկ սիստեմը. որ գործ է դրվում գաւառիս երկու գերմանական կօլօնիաներում։ Սակայն անցնեմ իրողութեան։

Ճօճկան գիւղից մի կին՝ Հէրիքնազ Պապինեան, առաջին ամուսնուց մի աղջիկ եւ երկու տղայ թողնելով՝ նորից ամուսնանում է։ Նոր ամուսինը մի երկու-երեք օր որբերին պահելուց յետոյ, անից դուրս է անում, խիստ պատուէր տալով կնոջը՝ որ միւս անգամ նրանց իր տուն չընդունէ։ Երկու տղաները մընում են օտար տներ ծառայի պաշտօնով, այն ինչ՝ տաս տարեկան Մարիամը մնում է դուրսը. կերակրվում է այս ու այն տան փշրանքներով եւ գիշերում նոյն տեղերում. իսկ որովհետեւ շատ անգամ նրան, իբրեւ անտէր երեխայի, շատերը այլ եւս չեն ուզում ընդունել՝ վճռում է դուրսը փողոցում մնալ՝ ոչ ոքի վրա բեռը չը լինելու նպատակով... Հերիքնազը հեռուից տեսնում է իր աղջկայ դրութիւնը եւ լուռ մորմոքվում. նրա ոչ մի աղերսանքը չէ ազդում երկրորդ մարդու վրա՝ Մարիամին տանը տեղ տալու համար ու մայրը վճռում է որբի դրութիւնը բարելաւել։

Բարելաւում է... բայց գիտէք, ընթերցող, ինչպէս. իր սեփական բթով խեղդում է աղջկան...

Հերիքնազը—այդ մայր-գազանը եւ իր տասներեք տարեկան որդին, որը իր ասելով, ներկայ է եղել այդ եղեռնագործութեան, Շուլավէրում բանտարկվեց։ Ես տեսայ այդ կնոջ. նա ինձ պատմեց մանրամասն իր արածը՝ թէ ինչպէս խեղդել է Մարիամին, որ քարերը վրան թափելով թագցրել է Ճօճկանի մօտ «Պոչատ-Թալում» եւ թէ ինչպէս սպանութեան հետքերը գտնվել են ու գործը բացվել։

Եթէ գտնվէր մէկը, որ յանձն առնէր այդ որբին խնամելու, ի հարկէ, չէր կարող եւ տեղի ունենալ մի այդպիսի հրէշաւոր դէպք, բայց քանի որ մեր գիւղերում խնամատար կարգելու հարցը դեռ եւս հում դրութեան մէջ է—գուցէ եւ աւելի վատերին հանդիպենք։

Գիւղական տանուտէրի պարտքն է երբեմն աչքի անցկացնել եւ այն գիրքը, որտեղ խնամակալական համախօսականներն են գրվում եւ ստուգել, թէ որքան ընտրված խնամատարը յարմար է իր կոչման. բայց ինչ արած, որ այդ գրքերը գրվում են, որպէս զի գրված մնան։

Ա. Ի.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թաւրիզ, յունվարի 3-ին

Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը խնդրում է սոյն գրութեան մի անկիւն չնորհել «Մշակի» էջերում։

Վարչութիւնը ստացել է պ. Համբարձում Առաքելեանի միջոցով ուղարկված 608 կտոր զանազան տեսակ ընթերցանութեան գրքեր, որոնք մարդասիրաբար նուիրել են մի քանի եւրիտասարդներ այն պայմանով որ վարչութիւնը իր հայեցողութեամբ գրադարաններ բանայ Ատրպատականի այլ եւ այլ գիւղերում։ Վարչութիւնը աւելի նպատակայարմար համարեց յիշեալ գրքերը 3 մաս անելով ուղարկել ընկերութեան ծախսով ու հսկողութեամբ ուսումնարաններ բացված գիւղերը, որոնք են Աղաղան գիւղ՝ Ղարադաղի, Դեղէ-Թաքէ եւ Բաբառու գիւղերը՝ Բարանդուզ գաւառակի։ Կրթութիւնից զուրկ գիւղական ազգաբնակութեան զարգացմանը նուիրված գրադարան-ընթերցարանները պէտք է հիմնվեն երեք գիւղերի ընկերութեան պահած ուսումնարաններին կից, որոնք՝ վարչութեան կողմից արված հրահանգների համաձայն, պիտի զեկավարեն ուսումնարանների ուսուցիչները որոշ ժամանակներում եւ օրերում, ուր պէտք է լսեն եւ օգուտ քաղեն թէ աշակերտները եւ թէ հասարակութիւնը։

Վարչութիւնը ստացել է նաեւ Պետերբուրգից, պ. Լ. Տիզդանովից 5 հատ Իլինի ռուսերէն քարտէզները՝ երկրագնդի 5 մասերը, յօգուտ աղքատիկ ուսումնարանների։ Վարչութիւնը իր կողմից կազմել տալուց յետոյ ուղարկեց Բարանդուզ գաւառակի Դեղէ-Թաքէ գիւղի ուսումնարանին։ Վարչութիւնը պարտք է համարում իր սրտագին շնորհակալութիւնը յայտնել գրքերը եւ քարտէզները նուիրող յարգելի պարոններին։

Ի դէպ, վարչութիւնը պատիւ ունի ծանուցանել ի գիտութիւն հայ հասարակութեան, որ այս տարի ընկերութիւնը բացի իր մանկապարտէզը, կար ու ձեւի արհեստանոցը, գորգեգործարանը՝ ուր աշխատում են 20 հոգի տեղացի, թէ գաղթական կանայք ու աղջիկներ, ըստ սովորականին պահպանելուց, 300 թուման Լիլաւայի ուսումնարանին, 150 թուման Բերդաթաղի Արամեան ուսումնարանին, 30 թուման Մուժամբար գիւղի նախակրթարանին նպաստ տալուց, բայց է արել նաեւ 5 գիւղական ուսումնարաններ գաւառներում. 2 Բարանդուզի Դեղէ-Թաքէ եւ Բաբառու գիւղերում՝ որոնք երկսեռ են եւ ունեն մի-մի ուսուցիչ եւ մի-մի ուսուցչուհի. 2 Ուրմի գաւառի Իքի-Աղաջ եւ Ռահվա գիւղերում եւ մինը Ղարադաղի Աղաղան գիւղում։ Ընկերութիւնը այս քայլն անելով ցանկութիւն ունի մի դրական ծառայութիւն մատուցանել գաւառների յետին թշուառութեան հասած հայ ազգաբնակութեան։ Ընկերութիւնը տարեկան 1500 ռուբլուց աւելի մի գումար ծախսելով իր ուժերից բարձր գործի է ձեռնարկել եւ քաջալայս է, որ հասարակութեան համակրութիւնն ու օժանդակութիւնը կը թեթեւացնեն այդ քաղցր բեռը։

Վարչութեան նախագահ՝

Սրբուհի Ամատունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը, նիւթերի շատութեան պատճառով, բաղկացած է $1^1/_2$ թերթից։

—

Կիրակի, յունվարի 23-ին, Թիֆլիսի Մողնու եկեղեցում հրաւիրված էր ծխականների ժողով, լսելու երէցփոխ իշխան Արսէն Բեհբութեանի հաշիւը եւ կատարելու երէցփոխի ընտրութիւն։ Հաշուետուութեան ժամանակ պարզվեց, որ եկեղեցու քահանաները իրանց եկամուտն աւելացնելու նպատակով թոյլ են տալիս իրանց մի շարք անկարգութիւններ եւ զեղծումներ. օրինակ, իրանց են յատկացնում եկեղեցական զարդերից օգտվելու համար նշանակած վճարները։ Ժողովը պարզեց մի շարք քստմնելի արարքներ։ Ծխականները չնորհակալութիւն յայտնեցին երէցփոխին եւ նորից ընտրեցին նրան երէցփոխ։

—

Կիրակի, յունվարի 23-ին, Թիֆլիսի կրուժոկում տեղի ունեցաւ չքեղ պարահանդէս Թիֆլիսի «Մասուր» բարեգործական ընկերութեան օգտին։ Կանանցից շատերը դրել էին սպիտակ պարիկներ, կամ թափել էին մազերի վրա պուդր։ Կային մի քանի տիկիններ աչքի ընկնող չքեղ զգեստներով։ Պարահանդէսը բազմամարդ էր։ Ներկայ էին քաղաքի հարուստ եւ բարձրաստիճան ընտանիքներ։ Պարահանդէսը այցելեցին կովկասեան կառավարչապետի օգնական Ա. Ֆրեզէ եւ Թիֆլիսի նահանգապետ Ի. Սվեչին։ Մուտք եղաւ 2000 ռուբլուց աւելի. ծախսը դեռ անյայտ է։ Զուտ արդիւնք երեւի կը գոյանայ մօտ 1400 ռուբլի։

—

«Тифлисскій Листокъ» լրագիրը, յունվարի 23-ին, Ախալքալաքից ստացել է հետեւեալ հեռագիրը. «Երէկ, յունվարի 22-ին, առաւօտեան ժամը 5-ին, Ախալքալաք քաղաքում եւ Բարալէթի քաղաքամասում նորից կրկնվեց երկրաշարժը։ Զգալի էին մի քանի զօրեղ սոորերկրեայ հարուածներ։ Գիւղերից ստացված տեղեկութիւններին նայելով՝ Մեծ-Սամարում կործանված է մի տուն, որի մէջ գտնվող չորս գիւղացիք մնացին փլատակների տակ։ Բնակիչները անյապաղ սկսեցին փորել քանդված տունը կենդանի թաղվածներին հանելու համար։ Սարսափը մեծ է։ Սոորերկրեայ հարուածներից քանդվեցին շատ տներ, որ վնասված էին նախկին երկրաշարժի ժամանակ։

—

Սեւ-ծովի ափերը դարձրել են իրանց վրա բժիշկների առանձին ուշադրութիւնը։ Դիտաւորութիւն կայ այդ ծովի ափերին գտնվող յարմար տեղերում հիմնարկել մի շարք բուժարաններ (կուրօրտներ) թոքերով եւ ջղերով հիւանդների համար։ Լրագիրները հաղորդում են, որ միտք է ծագել հիմնել մի ընկերութիւն երեք միլիօն դրամագլխով այդպիսի բուժավայրեր կազմակերպելու համար բոլոր անհրաժեշտ կատարելագործութիւններով։

—

Քաղաքային վարչութիւնը, քաղաքի հաշուով պահվող տարրական դպրոցներում տեղական լեզուների դասաւանդութեան գործը աւելի բարւոք դրութեան մէջ դնելու համար, հաղորդում է քաղաքային ուսումնարանական յանձնաժողովին, որ նա նպատակայարմար է համարում յատուկ դասատուներ հրաւիրել այդ նպատակի համար։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ նկարիչ Ֆեթվաճեանի նկարների ցուցահանդէսի փակումը, յաճախորդների բազմութեան պատճառով, յետաձգված է. ցուցահանդէսը կը շարունակվի դարձեալ երկու շաբաթ։

—

Մեր կառավարութիւնը վերադարձնում է շաբարի վրա դրած ակցիզը այն դէպքում, երբ շաբարը ուղարկվում է արտասահման։ Երեւանեան նահանգից դէպի Թաւրիզ արտահանվող շաբարի ակցիզը մինչեւ այժմ յետ էր տրվում Թիֆլիսի մաքսատանը։ Այժմ ֆինանսների մինիստրութիւնը որոշել է շաբար արտահանողների գործը հեշտացնել եւ ակցիզը վերադարձնել սահմանագծի մօտ գտնվող Ջուլֆայի մաքսատանը։

—

Մեզ հաղորդում են, որ երիտասարդ բժիշկ Ա. Խատիսեան, փետրվար ամսի սկզբին կը կարդայ Թիֆլիսի առեւտրական ընկերութեան դահլիճում մի դասախօսութիւն «Սանատօրի» կոչված բուժարանների մասին։ Դասախօսութեան արդիւնքը կը յատկացվի երկրաշարժից վնասվածների օգտին։

—

Ստացանք 1) Մ. Շօվրեանի «Հայերը մարդաբանական եւ աշխարհագրական տեսակէտից» գրքոյկը՝ արտատպված «Արարատ» ամսագրից։ Գրքոյկը տպագրված է էջմիածնի տպարանում 1899 թուին եւ բաղկացած է 36 փոքրադիր երեսներից։ 2) Մ. Մարգարեանցի «Ատամներ եւ նոցա առողջապահութիւնը» գրքոյկը, որ կազմված է գերմանական եւ ռուս մասնագէտների աշխատութիւնների հետեւողութեամբ։ Գրքոյկը բաղկացած է փոքրադիր 50 երեսից եւ արժէ 20 կոպէկ։

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ հաղորդում են, որ Ախալքալաքի գաւառի երկրաշարժից վնասվածների օգտին, առաջիկայ չորեքշաբթի օր, յունվարի 26-ին նշանակված է յատուկ ներկայացում։ Պէտք է տրվի «Տատեանա Բեպինա»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՑՑԱՐԻԱՑԻՑ

—

Ժընեվ, յունվարի 20-ին

«... Եւ մի այսպիսի կարեւոր հիմնարկութիւն, ինչպիսին է էջմիածնի մատենադարանը, ձեռնհաս զեկավարի բացակայութեան եւ աննկարելի անկարգութիւնների պատճառով՝ ոչ միայն չէ ծառայում հայկական մատենագրութեան ուսումնասիրութեանը, այլ եւ օր օրի վրա քայքայվում եւ փչանում է»։

Այդ տխուր խօսքերն էր պարունակում Կովկասից ստացած մի նամակ, որի հեղինակը մի քանի ժամանակ առաջ իր աչքերով տեսել եւ իր ականջով է լսել հաղորդած փաստերը։ Ակամայ այդ նամակը յիշեցի, երբ մի քանի օր առաջ առիթ եղաւ ներկայ լինելու հրապարակական մի դասախօսութեան համալսարանի դահլիճում, ուր մեծ զարմանքով տեղեկացայ, թէ ինչպէս մինչեւ իսկ Շվէյցարիա, որ համարեա իր բոլոր հաշիւները վերջացրել է իր հին մատենագրութեան հետ, աչքի լոյսի նման է գնահատում ամեն մի հին արձանագրութիւն, հին ձեռագիր, հին գօկումենտ, որ լոյս է սփռում իր կամ առհասարակ ընդհանուր պատմութեան այս կամ այն կէտի, այս կամ այն ճիւղի վրա։

Ծանօթանալով քիչ-շատ այստեղի գրադարաններին եւ հասարակական մատենադարանին, մարդ չէ կարող առանց ներքին վրդովման յիշել այն փաստը, թէ ինչպէս ամբողջ Կովկասում միակ եղող էջմիածնի մատենադարանը, որ չտեմարան եւ արթուն հաւաքող պիտի լինի այն բոլորի, ինչ վերաբերում է հայոց հին եւ նոր գրականութեան, տարիների ընթացքում չէ աճում, չէ զարգանում, այլ ընդհակառակը, մինչեւ անգամ նուազում, կամ եթէ կամենաք՝ հալվում է։ Դա ուղղակի հետեւանք պէտք է համարել այն իրողութեան, որ էջմիածնում չը կայ մի կարող անձ, սիրող գրականութեան, եւ մի եւ նոյն ժամանակ վայելող վանքի երեսուն իշխանութեան վստահութիւնը, որի ձեռքը յանձնվէր այդ հետաքրքրական հիմնարկութեան զեկը, եւ ներքին կազմակերպութիւնը։

Բայց միթէ այդպիսի անձինք չը կան հայոց հասարակութեան մէջ։ Անշուշտ կան, եւ դրանցից մէկը նստած Եւրօպայում, հեռու է այնպիսի մի գործից, որին նա կարող էր ծառայել ահագին օգտակարութեամբ։ Դա Նորայր Բիւզանդն է։

Մեր յարգելի հայրենակցի անունը քաջ ծանօթ է հայոց գրական շրջաններին.—լրջօրէն պատրաստված, ծանօթ լեզուներին, տեղական հայկական հին մատենագրութեան, պ. Բիւզանդ, տարաբաղդաբար, երկար տարիների ի վեր հեռու մնաց հայրենիքից, ընտանեկան պատճառներով բնակութիւն հաստատելով Ստօկհօլմում։ Հեռու մայրենի երկրից, զուրկ այն աղբիւրներից, որոնք նրա ձեռքի տակ ի հարկէ չէին կարող լինել օտար մի քաղաքում, պ. Բիւզանդ, բնականաբար չը կարողացաւ կատարել այն գրական աշխատութիւնները, որ նա կը կատարէր եթէ գտնվէր հայրենի երկրի մէջ, շրջապատված բարեպատեհ պայմաններով։—Միթէ ժամանակ չէ, որ նա, գէթ այժմ հայրենիք վերադառնար, եւ այնտեղ նուիրվէր իր գրական աշխատանքներին։ Կարծում եմ, ժամանակ է, մանաւանդ որ այժմ չը կան ընտանեկան այն հանգամանքները, որոնք նրան կապում էին Եւրօպայի հետ։—Ստօկհօլմի մի լրագիր հաղորդեց մի քանի ամիս առաջ, որ մեր հայրենակիցը կորցրեց իր ամուսնուն,—այդ լուրը լոյս տեսաւ, որքան յիշում եմ, եւ հայոց լրագիրներում—եւ հետեւաբար այժմ աւելի հեշտ է թողնել այն երկիրը, ուր նա հիւրասիրված էր վաղուց ի վեր, եւ վերադառնալ այն հայրենիքը, որը ուրախութեամբ կընդունէր իր աշխատաւոր զաւակին։

Դուք հաւանայն պիտի լինէք, կարծում եմ, որ պ. Նորայր Բիւզանդ մեծ աջողութեամբ կարող է իր ձեռքը առնել էջմիածնի մատենադարանի զեկը, իբրեւ միանգամայն վստահելի մի անձ, եւ մի կողմից կարգի բերելով այդ խոշոր հիմնարկութիւնը, միւս կողմից նա միջոց կունենայ աւելի արդիւնաւոր կերպով առաջ տանելու իր գրական ուսումնասիրութիւնները։ Այդ կարծիքի հետ միասին, երեւի դուք մեծ տարակուսանքներ ունէք, թէ ով պիտի հրաւիրէ այդ մարդուն էջմիածին, ով պիտի նրան հովանաւորէ եւ հեռու պահէ վանական կաշկանդիչ ճանկերից կամ ով պիտի երաշխաւորէ, որ նոյն իսկ հրաւիրվելուց յետոյ՝ նա ստիպված չի լինի ձեռքերը ծալած նստել եւ ողբալ իր միամտութիւնը...։ Այդ տեսակ տարակուսանքները անհիմն չեն.—բայց ով գիտէ, գուցէ ներկայ դէպքը փոքրաթիւ բացառութիւններից մէկը դառնայ։ Փորձեցէք։

Ցանցանք է, ճշմարիտ, որ կարող գլխի եւ ոյժի տէր մարդիկ վանքն իրանց գրական ոյժերը եւ ժամանակը օտար երկիրներում մինչդեռ բուն հայրենիքի մէջ ամեն ինչ կաղում է, մարդկանց պակասութեան պատճառով։ Ցետ կանչեցէք դրանց։ Հաւաքեցէք ցրված ոյժերը։

Խ. Մալումեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Իտալուհի Զենելլիի պատմութիւնն աւելի լաւ բացատրելու համար, «Matin» լրագրից առաջ ենք բերում հետեւեալ մանրամասնութիւնները։ Տասն եւ վեցամեայ իտալուհի Սիլվիա Զենելլիին քիչ ժամանակ առաջ փախցրել էր մի թիւրք օֆիցեր եւ փակել էր նրան Էնկի-Շօրի հարեմում։ Երիտասարդ աղջկայ պահանջմամբ Կ. Պոլսի իտալական դեսպանը միջամտեց այդ գործում, ուստի եւ վճռվեց բերել Զենելլիին Կ. Պոլիս եւ յանձնել դեսպանին։ Ծրագրի առաջին մասը կատարվեց. աղջկան բերին Կ. Պոլիս, բայց երբ թիւրքաց արդարադատութեան մինիստրը տեսաւ Զենելլիին, այնքան հաւանեց նրան, որ վերցրեց իր մօտ։ Իտալական դեսպանը կրկնեց իր պահանջները, յայտնելով, որ մերժումը կարող է ամենալուրջ դիպլոմատիական բարդութիւնների պատճառ դառնալ։ Ինչպէս յայտնի է վերջին հեռագիրներից, թիւրք ճաշակագէտ մինիստրը ստիպված էր վերադարձնել երիտասարդ Զենելլիին իր հօրը։

—«Manchester Gnardian» լրագիրը հաղոր-

դում է, իբրեւ լուր, թէ լորդ Բօզբերրիի եւ ազատամիտ կուսակցութեան պաշտօնական պարագլուխների մէջ լուրջ տարաձայնութիւններ են ծագել։ Միւս կողմից «Neue Freie Presse» լրագրի Լոնդոնի թղթակիցը հաղորդում է այդ լրագրին հետեւեալը. «Ամենքի հայացքը ուղղված է այժմ լորդ Բօզբերրիի վրա, որի համար բոլոր կուսակցութիւններից աւելի պահպանողականներն են աշխատում, համարելով նրան միակ մարդը, որ կարող է ազատել երկիրը դժուար դրութիւնից։ Բօզբերրիի հետ միասին պէտք է ասպարէզ դուրս գայ նաեւ նրա ընկեր Գրէյ։ Ցայտնի է նոյնպէս, որ թագուհին, Սօլիսբիւրիի հրաժարականն ընդունելուց յետոյ, մտադիր է կառավարութեան գլուխ յանձնել ոչ այլ ոքի, բացի լորդ Բօզբերրիից, դէպի որը նա անսահման հաւատ ունի եւ որի ընդունակութիւնները նա շատ բարձր է գնահատում»։

—Ինչպէս գրում են «National Zeitung»-ին Կանէյից, քիչ ժամանակ առաջ այնտեղ լուր տարածվեց, թէ ժամանակաւոր դրութեանը կըրետէում չուտով վերջ կը տրվի եւ թէ արքայորդի Գէօրգին վերջնականապէս Կրետէի խնամակալ կը նշանակվի։ Սակայն դիպլօմատիական շրջաններում հաւատացնում են, թէ Կրետէին հովանաւորող պետութիւնները ամենեւին միտք չունեն որ եւ է ձեւով նորից հերթական դարձնել Կրետէի հարցը։ Պետութիւնները կը մտածեն Կրետէի դրութիւնը վերջնականապէս բարեկարգելու մասին երեք տարուց յետոյ միայն, երբ կը լրանայ արքայորդի Գէօրգիի լիազօրութեան ժամանակամիջոցը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Արտասահմանեան լրագիրները մօտ օրերումս հաղորդեցին, թէ Ամերիկայում տեղի է ունեցել կաթոլիկ հոգեւորականութեան ներկայացուցիչներից կազմված մի ժողով, որի մէջ քննվել է կաթոլիկ քահանաների ամուսնութեան հարցը։ Ժողովը եկել է այն եզրակացութեան, թէ անհրաժեշտ է փոխել եկեղեցական կանոնադրութիւնն այդ հարցի վերաբերմամբ՝ ի նկատի առնելով գլխաւորապէս այն հանգամանքը, որ շատ ամերիկեան կաթոլիկ համայնքներ մնում են առանց քահանայի, ամուրիութեան խստապահանջ օրէնքի պատճառով։ Այդ լուրի հետ միասին արտասահմանեան քանի մի լրագիրներ հաղորդեցին, թէ Պապը, իբր զիջանելով հարկադրող անհրաժեշտութեանը՝ մի կոնդակով հաստատել է ժողովի որոշումը։

Այժմ միեւնոյն հարցի վերաբերմամբ «Vocdella Veria» լրագիրը, վճռականապէս հերքելով Պապի կոնդակի մասին տարածված լուրը, բացատրում է այդ հարցը հետեւեալ կերպով։ «Պապն ուղարկել է կաթոլիկ Ամերիկայի բարձրաստիճան հոգեւորականներին ոչ թէ կոնդակ, այլ հրահանգներ, որոնցով հոգեւոր կարգապահութեան մէջ մտցնում է մի տեսակ ներողամտութեան սկզբունք։ Ամուրիութեան վերացումն պաշտօնապէս տեղի չէ ունեցել, որովհետեւ դա կարող էր խախտել կաթոլիկ եկեղեցու հիմնարկութիւնների հաստատութիւնը։ Պապն առաջարկել է միայն բարձրաստիճան կաթոլիկ հոգեւորականներին ներողամտաբար վերաբերվել դէպի այն քահանաները, որոնք Ամերիկայում օրինազանց կը լինեն ամուրիութեան հարցում»։

Ցայտնի է արդէն, որ Ամերիկայում բազմաթիւ կաթոլիկ ամուսնացած քահանաներ կան, եւ ինչպէս հաղորդում էր նորերումս մի բրազիլեան լրագիր, միայն Մինաս—Գէրաէսի շրջանում այդպիսի քահանաների թիւը 30-ից աւելի է։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 յունվարի

ԼՕՆԴՕՆ։ Զինուորական մինիստրութիւնը Տուգէլայից ոչ մի տեղեկութիւն չէ ստացել։ Սպիոնսկոպի կուռում անգլիացիների ունեցած կորուստի ճիշդ հաշիւից երեւում է, որ անյայտ կորել են ընդամենը 215 մարդ։

ՍՊԻՐՄԱՆՍԿԱՄՊ։ Բուլլէրը դիմեց զօրքին մի ճառով, որով յայտնեց, թէ յոյս ունի մի շաբաթից յետոյ Լէդի-Սմիթ մտնելու։ Տեղացիները շարունակում են հաւատացնել, թէ Ժուբէր սպանված է Լէդի-Սմիթի մօտ ռումբով։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Բալֆուրի ճառից յետոյ՝ սըր Զարլզ Դիլկ յարձակվում է կառավարութեան վրա, ասելով, թէ ամեն բանում նա է միայն պատասխանատու։ Ուիդդէմ պաշտպանում է կառավարութիւնը։ Եթէ ուշացնում են զօրքերի ուղարկելը, դա այն պատճառով է, որ կամենում են ժամանակ տալ դիպլօմատիային։ Այսուամենայնիւ կարճ միջոցից յետոյ Հարաւային Աֆրիկայում 180,000 զինուոր եւ 398 թնդանօթ կը լինեն։ Այս քանակութեան վրա պէտք է աւելացնել նաեւ 26,000 աֆրիկանդերներ, որոնց թիւը օր ըստ օրէ աւելանում է։ 1898 թւին բօէրների զօրքի թիւը հաշւում էր 5,900, իսկ թնդանօթներինը 110։ Ուինդդէմ խնդրում է մերժել Ֆիցմօրիսի առաջարկութիւնը։ Բրոդրիկ յայտնում է, որ ինքը հնարաւորութիւն չունի որ եւ է բան հաղորդելու անգլօ-գերմանական գաղտնի դաշնակցութեան մասին։ Բալֆուր յայտնում է, թէ կառավարութիւնը դիտաւորութիւն չունի հընդկական զօրքերը Հարաւային Աֆրիկայում ծառայեցնելու։ Բրայդա հարցնում է—յայտնի են արդեօք Չեմբերլէնին «Indépandence Belge» լրագրի հաղորդած հեռագիրները եւ ինչպէս է վերաբերվում Չեմբերլէնն այդ ամենին։ Չեմբերլէնն առարկում է, թէ իրան յայտնի են Ֆերֆիլդի երեք նամակը, բայց նրանց բովանդակութիւնը ուղիղ չէ հաղորդված լրագրին, ինչ վերաբերում է միւս նամակներին, այդ մասին Հէֆկիսլէյ հաղորդել է նրան, թէ նամակները 1899 թւին գողացել է մի պաշտօնից արձակված գրագիր։ Այդ նամակների մասին ճառախօսն իմացել է նրանց հրատարակվելուց քանի մի օր առաջ։ Մակ-Նէյլ հարց է առաջարկում, թէ ի նկատի առնելով մինիստրութեան անդամներից մէկի ցոյց տուած անձնական ատելութիւնը եւ հրապարակական նենգամտութիւնը, ինչ միջոցների կը կամենար դիմել ժողովը։ Բալֆուր առարկում է, թէ այդպիսի մեղադրանքները պէտք պատժվեն արհամարհանքով միայն։ (Հաւանութեան ձայներ)։

ՊԱՐԻԶ։ Դէշանէլն իր ճառում, որ արտասանեց Ֆրանսիական ակադեմիայի անդամ ընտրվելու առիթով, երկար խօսեց Էրվէյի մասին, որպէս ժուրնալիստի։ 1870 թւականի պատերազմից յետոյ Էրվէ իր հայացքն ուղղեց Ռուսաստանի վրա։ Նա այդ պետութեան հետ կապած դաշնակցութեան սկզբնապատճառներից մէկն էր, այն դաշնակցութեան, որ նրա կարծիքով պէտք է ծառայէր իբրեւ հակակշիռ գերմանական հեգեմոնիայի։ Էրվէն ցանկանում էր, որ այդ դաշնակցութիւնը նոր դարագլուխ կազմէր Եւրօպայի եւ խաղաղութեան համար։ Էրվէն այն կարծիքի էր, թէ Ֆրանսիան անկարող է միաժամանակ մաքառել եւ Գերմանիայի, եւ Անգլիայի դէմ, թէ նրա համար, որ Ֆրանսիան ազատ լինի ցամաքի վրա, նա պէտք է հանգիստ լինի ծովի կողմից։ Ֆրանսիայի համար աւելի հեշտ է մօտեցնել իրար Անգլիային եւ Ռուսաստանին, քան Գերմանիայի համար մօտեցնել Իտալիային եւ Աւստրօ-Ունգարիային։

ՊԱՐԻԶ։ Սենատը վերսկսեց իր նիստերն եւ առանց վիճաբանութեան հաստատեց կայացած ընտրութիւններից շատերը, ի միջի այլոց եւ գեներալ Մերսիէէին։

ՀԱԱԳԱ։ Կառավարութիւնն առաջարկեց պարլամենտին օրէնքի մի նախագիծ հաստատելու համար միջնորդ դատարանին վերաբերեալ այն պայմանագրութիւնները, որոնք կապված էին Հաագայի կոնֆերենցիայում։ Մի եւ նոյն ժամանակ կառավարութիւնը պալատի ուշադրութիւնը հրաւիրեց այն հանգամանքի վրա, որ Հաագան կոնֆերենցիայի կողմից միաձայն ընտրված է որպէս յարմարաւոր տեղ մշտական միջնորդ դատարանի միջազգային բիւրօյի համար։ Կառավարութիւնը յայտնում է, թէ այդ որոշումը մի առանձին պատիւ է համարում Նեդերլանդիային, ուր նախկին դարերում շատ անգամ խաղաղութեան դաշինք են կնքվել, որոնցով աւարտ են ստացել եւրօպական պատերազմները։

ՇԱՆԳՀԱՅ։ 50 չինացի ստորագրեցին մի բողոք Կուանդ-Սու կայարին գահընկէց անելու դէմ։ Պեկինից հրաման է արձակած կալանաւորելու առաջին երեք ստորագրողներին։ Այստեղի հեռագրատան կառավարիչը, որ նոյնպէս ստորագրել է բողոքը, գնաց Հոնկոնգ։

ԼՕՆԴՕՆ։ «St. James Gazette» լրագիրը հաղորդում է, թէ Բուլլէրն անցել է Տուգելա գետն երեք տեղից։ Ամբողջ օրը կռիւ է տեղի ունենում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 20-ին Զմերային պալատի համերգի դահլիճում տեղի ունեցաւ երկրորդ պարահանդէս Նոցա Մեծութիւնների ներկայութեամբ։

21-ին գեղարուեստների Ակադեմիայում փակվեց ճարտարապետների 3-րորդ ժողովը, որին ներկայ էր մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։

ԼՕՆԴՕՆ։ Այն լուրը։ թէ Օմդուրմանում գտնվող զօրքերը ապստամբել են, չէ համապատասխանում փաստերին։ Այդ լուրը ծագել է նրանից, որ զօրքին հրամայված էր յետ դարձնել լիք փամփուշտները։ Այդ կարգադրութիւնը անվստահութեան նշան համարելով՝ զօրքը դժկամակութեամբ վերաբերվեց նրան, բայց եւ այնպէս ընդդիմութիւն ցոյց չը տրվեց։ Բացի սրանից ուրիշ ոչ մի դէպք չէ պատահել, որ վերաբերէր զօրքերի ընդհանուր կարգապահութեանը։

ԼՕՆԴՕՆ։ Լօրդերի պալատ։ Էդուարդ Գրէյ պատասխանում է այն կշտամբանքին, թէ ընդդիմադիր կուսակցութիւնը չը գիտէ նշանակութիւն տալ դրութեան լրջութեանը։ Բայց հէնց դրութեան լրջութիւնն է վիճաբանութիւններ ծագեցնում։ Ֆիցմօրիսն իր առաջարկութեամբ դիտաւորութիւն չունէր թագցնել ընդդիմադիր կուսակցութեան մէջ գոյութիւն ունեցող կարծիքների տարբերութիւնը։ Ընդդիմադիր կուսակցութիւնը չէ կարող չը պախարակել այն, ինչ որ տեղի է ունեցել. բայց նա պատրաստ է օգնութիւն ցոյց տալ կառավարութեանը պատերազմի շարունակութեան վերաբերմամբ։ Ասկիզ ասաց, թէ պատերազմը պէտք է վարել մինչեւ վերջը, մինչեւ այն ժամանակ, երբ բրիտանական դրօշակը կը ծածանի Պրետորիայում եւ Իօհաննէսբէրգում։ Ճառախօսի կարծիքով, պէտք է ձգտել, որ Հարաւային Աֆրիկայում սպիտակամորթների իրաւունքները հաւասարվեն, եւ այսուհետեւ այնտեղ անհնար լինի կազմակերպել այնպիսի դաշտային զօրք, որ դուրս լինի բրիտանական գերիշխանութիւնից։ Եթէ կառավարութեան նպատակներն էլ այդ են՝ այն ժամանակ ճառախօսը օգնութիւն ցոյց կը տայ նրան։ Պատերազմը անարդար համարել չէ կարելի։ Ճըշմարիտ չէ, թէ բօէրների կառավարութիւնը պատերազմ է մղում ազատութեան համար, բայց մինիստրների գործողութեան եղանակի պախարակումը հիմնաւոր է։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Բրոդրիկ յայտնում է, թէ կառավարութիւնը չէ հրաժարվում ոչ մի իրաւունքից, բայց ի նկատի առնելով Գերմանիայի առաջադրութիւնները, անգլիական կառավարութիւնը պարտաւորվեց չը դրաւել չոգենաւերը, մինչեւ որ նրանք չենթարկվեն ամենածանր կասկածի։ Բրայս հերքում է այն մեղադրանքը, թէ ընդդիմադիր կուսակցութիւնը կամենում է իբր չահագործել պատերազմը յօգուտ ազատամիտների։ Մինիստրների բացատրութիւնները պատերազմի վերաբերմամբ չնչին եւ անբաւարար են։ Տրանսվալի օտարերկրացիների գանգատները չափազանցացրած են։ Օտարերկրացիք իրանք, առանց պատերազմի, կարող էին իրաւունքներ ձեռք բերել։ Պատերազմը չատ աւելի վատ է, քան այդ գանգատները։ Գերիշխանութեան հարցը Չեմբերլէնը խառնել է այդ գործում բոլորովին ի զուր։ Ի՞նչ կարելի էր սպասել բօէրներից, բացի պատերազմից, երբ արդէն պարզ երեւում էր, որ պատերազմն անխուսափելի է։ Ամենածանր մեղադրութիւնը, որ ընկնում է կառավարութեան վրա, այն է, որ նրա դիպլօմատիան գործում էր պատերազմական ոգով այն ժամանակ, երբ նախապատրաստութիւններ տեսնելիս ի նկատի էր առնված խաղաղութիւնը։ Կառավարութիւնը հակառակորդին տուեց խիստ օրինական casus belli-ի եւ պատերազմական առաջին շարժումների բոլոր չահաւէտ կողմերը, որի պատճառով անգլիացիները սկսեցին չարունակ ուշ հասնել այն տեղերը, ուր պէտք էր լինել առաջ։ Հէնց այս պատճառով էլ Անգլիային պախարակելը եւրօպական ցամաքում այնպէս մեծ չափեր ընդունեց։ Միակ բանը, որ այժմ անխուսափելի է, դա ժողովրդի զայրոյթն է։ (Հաւանութիւն)։

Գոչէն ասում է, թէ ցաւում է, որ պալատում ձգտում են պախարակել մինիստրներին առանձին առանձին, այն ինչ կաբինէտը մէկ է եւ նա պէտք է նկատվի իբրեւ մի ամբողջութիւն։ Գոչէն խօսում է ապա ծովային մինիստրութեան մասին եւ մատնացոյց է անում այն հանգամանքը, որ նաւատորմիղը կարողացաւ տալ զօրքին իր մեծ թնդանօթները եւ զինուորներին, չը սպառելով իր միջոցները եւ չը թուլացնելով ծովային ծառայութիւնը։ Իբրեւ եզրակացութիւն Գոչէն ասում է, թէ պէտք էր թողնել բաւականաչափ ծովային ոյժ նաւատորմը ռազմական դրութեան մէջ դնելու կարեւոր դէպքի համար։ Զարմիտ անձինք կարող էին գայթակղվել եւ օգուտ քաղել դրութիւնից, բայց բարեբաղդաբար մեր յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ բարեկամական են։ Դրութիւնը թէեւ երկիւղալի չէ, բայց ծանր է։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Վիճաբանութիւնների ժամանակ պաշտպանողական Սաունդերսօն նկատում է, թէ Անգլիան յարձակման է ենթարկվում երկու կողմից, ճակատից նրա վրա յարձակվում են բօէրները, իսկ յետեւից—իրլանդացի նացիօնալիստները։ Իրլանդացի նացիօնալիստները սաստիկ աղմուկ են բարձրացնում։ Նախագահը բացատրում է, թէ Սաունդերսօն չէ խախտել պարլամենտական կարգը, որովհետեւ չէ տուել պալատի անդամներից ոչ մէկի անունը։ Իրլանդացի պատգամաւորները յաճախ, առանց ընդհատվելու, վիրաւորական կերպով են խօսում անգլիական ազգի մասին։ Սաունդերսօն վերջում ստիպված է լինում յետ առնել իր խօսքերը։

ԼՕՐԻՆՏՕ-ՄԱՐՔԵԶԻ։ Տուլիից հաղորդում են, թէ Լիմպօպօ գետը վարարել է եւ քանդել կամուրջը։ Մինչեւ ժամ ամիսը գետից անցնելը անհնարին կը լինի։

Ամերիկան հիւպատոս Գէյ գնաց Պրետորիա։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ին հեռագրում են Լօրէնցո-Մարկէզէից, թէ նախագահ Շտէյն դիմել է մի ճառով Նատալի բնակիչներին, որով մեզադրել է Անգլիային այն բանում, թէ նա է ստիպել բօէրներին պատերազմ սկսելու։ «Անգլիան առաջին անգամը չէ, որ խմում է Տրանսվալի եւ Օրանժեան բօէրների միատեղ թափած արիւնը, բայց նա այժմ թափում է նաեւ աֆրիկանդէրների արիւնը»։

23 յունվարի

ՎԻԵՆՆԱ։ «Neue Freie Presse» լրագրում հրատարակված է մի խօսակցութիւն պարսկական դեսպան Նարիման-խանի հետ։ Դեսպանը յայտնեց, թէ փոխառութեան գործը ոչ մի քաղաքական նշանակութիւն չունի. դա զուտ դրրամական գործ է։ Ուրիշ ո՞ր երկրին կարող էր դիմել Պարսկաստանը, եթէ ոչ Ռուսաստանին, որի հետ նա հարեւան է եւ մօտ յարաբերութիւններ ունի։

ԲԵՐԼԻՆ։ «Kölnische Zeitung» գրում է պարսկական փոխառութեան առիթով, թէ Գերմանիան ոչ մի հիմք չունի ընդդիմադրելու գործերի այժմեան ընթացքին Պարսկաստանում։ «Գերմանիայի քաղաքական շահերը Պարսկաստանում հաւասար են զրոյի, ասում է լրագիրը, իսկ տնտեսական շահերի համար միայն օգտաւէտ կարող է լինել, եթէ մի այնպիսի ուժեղ ձեռք, որպիսին է Ռուսաստանինը, կարգ ու կանոն կը մտցնէ Պարսկաստանում եւ նպատակայարմար գործունէութեամբ հնարաւորութիւն կը տայ շահագործել երկրի բընական առատ հարստութիւնները, իսկ դա առանձին նշանակութիւն ունի Բաղդադի երկաթուղու համար։

ՊՐԱԳԱ։ Երիտասարդ չեխերի կուսակցութիւնը 71 ձայնով վճռեց մասնակցել այն կոնֆերենցիային, որի մէջ պէտք է քննադատվեն աւստրիական գերմանացիների եւ չեխերի համաձայնութեան վերաբերեալ հարցերը։ Ընտրվեցին 6 անդամներ։

24 յունվարի

ԼՕՆԴՕՆ։ Դուրբանից հաղորդում են յունվարի 22-ին, թէ կառավարութեան ստացած տեղեկութեան համաձայն՝ բօէրները յարձակում գործեցին Նկուտարի վրա, որ Զուլուլանդի կառավարչական կենտրոնն է։ Բօէրները, որոնք բերել էին իրանց հետ եւ թնդանօթներ, տեղական կառավարչին ստիպեցին անձնատուր լինել։ Լուրերին նայելով, կառավարիչը եւ նրա շտաբը գերի են առնված։

Ֆերրիպեր հրամանատարի օգնականը գերի վերցրեց Նկուպուի մօտ անգլիական հեծեալ ոստիկաններից 10 սպիտակամորթի եւ 34 տեղացիների։

ՊԱՐԻԶ։ Այսօր Սէն-Մանդէում կայացաւ ճաշկերոյթ ի պատիւ Վալդէկ-Ռուսսոյի եւ Միլերանի։ Ճաշկերոյթը կազմել էին գործարանական բանւորների խորհրդակցական պալատները։ Վալդէկ-Ռուսսօն մի ճառ արտասանեց, որի մէջ, ի միջի այլոց, ասաց. «Այժմեան կառավարութիւնը թշնամութիւնն ստանձնեց ամենածանր հանգամանքներում. նա ստիպված էր պաշտպանել հանրապետութիւնը նրա մըշտական թշնամիների դէմ։ Մենք դեռ պէտք է տանենք էլի ուրիշ փորձանքներ, որոնց մէջ բռնութիւնը տեղի կը տայ խորամանկութեան։ Առանց երկիւղի մենք այդ էլ կը տանենք, որովհետեւ հակառակ քննադատութեան, հանրապետութիւնն անպտուղ չէր եւ դէմոկրատիան, իր տարած յաղթութիւնների համագումարն անելով, թոյլ չի տայ իր ձեռքից խլել այնքան ժամանակվայ ջանքերի վարձատրութիւնը։ Մենք ապագայից չենք վախենում, որովհետեւ գիտենք, որ նա պատկանում է հանրապետութեանը»։

ՍՊԵՐՄԱՆՍԿԱՄՊ։ Թշնամին հրացան էր արձակում այսօր բլուրներից մեր հեծեալների էսկադրօնների վրա, որոնք հետախուզութիւններ էին անում։ Բօէրները չարունակում են այրել խոտը Մաունտ-Ալիսի ձախ կողմում նրա համար, որ հնարաւորութիւն ունենան դիտել մեր զօրքի առաջխաղացութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւուսարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. Պրօտասեվիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Գուրկօ—1¼—2 ժ. ներքին հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօտասեվիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շպակօվսկի—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. Նաւուսարդեան—7—7½ ժ.
Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն մէզի, խեի և արեան:

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Առվանեսակի—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
78—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺ. ՄԻԽԱՅԻԼ ԳԷԴԷՎԱՆՕՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից:

Առաւօտեան՝

Վ. Ի. ՃԻՃԻՆԱԴԶԷ—ատամների հիւանդ. 8—10 ժ.
Գ. Գ. ՄԱՂԱԼՕՎ—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Ն. Ս. ՄՈՒԼԻՆ—ականջի, կոկորդի և քթի հ. ամեն օր 10½—12 ժ.
ԵՖԻՄԻ ՊԱՒԼՕՎԻՉ ԳԱՈՒԴԵԼԻՆ—ներքին և երեխաների հ. ամենայն օր ժ. 11—12, բացի շաբաթ օրերից:
Ա. Ն. ՇԱՏԻԼՕՎ—աչքի հ.—12—1 ժ.
Ն. Զ. ՈՒՄԻԿՕՎ—երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր. 12—1 ժ.
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—վիրաբուժական հ. 12—1 ժ. և երեքշաբթի օր 3—4 ժ.
Ի. Դ. ԲԵԳՈՒԵԲԵԳՕՎ—վեներական, մորթի և միզասեռ. հ. 1½—2 ժ.
Մ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—նեարդային և ելեկտրօտէրապիա, 1—2 ժ.

Երեկոները՝

Դ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—ներքին և երեխաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.

Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիական հետազօտութիւնների համար:

Վճարը խորհրդի համար—50 կ. մնացածը պայմանով:

Նիկոլաևսկայա փողոց, Վօրոնցօվի արձանի հանդէպ, տ. Սագինօվի, № 11

Հիւանդանոցի վերատեսուչ՝
0—12 Միխայիլ ԳԷԳԷՎԱՆՕՎ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԻ

1 մաս, 160 երես, 1 ռուբլի

(Ճանապարհածախսով 1 ռուբլի 20 կոպէկ)

Դիմել՝ Женева, Швейцарія, Т. Н. Іоаннесянцу.

Jenève, Suisse, Rue de Candolle 19, Pension Vivien, M. T. Ioannissian. (Ե. Հ.) 4—10



Միակ պետական արտօնեալ դեղատներում կայ

Առաջին Կովկասեան ընկերութեան մէջ:
18—50

ՎՐԱՑ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, յունվարի 27-ին

Վրաց դրամատիկական խմբի անդամները, մասնակցութեամբ Վ. Ս. Ալէքսիէվ-Մեսխիեվի

Գ. Վ. ԳԻԳԻՎԱՆՕՎԻ բենեֆիսին

կը ներկայացնեն

ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ

Ողբ. 5 արարուածով, հեղ. Գայկօվի, թարգմ. Բաքրաձէի:

Մասնակցում է ամբողջ խումբը:

1—2

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՆՈՐԴ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պատաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ:

Հրաւիրում է պ.պ. տանտէրերին հաղորդել մանրամասն հասցէ ազատ բնակարանների (դրա համար վերցնվում է 20 կոպ.), որ չատ դիւրութիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ բնակարան վարձողներին: Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ: Գրասենեակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ: Ցանկացողները թող դիմեն գրասենեակ:

№ 1. 0—5

Վիեննայի Մխիթարեանների տպարանում

Մամուլի տակ է

ՁԷՅԹՈՒՆՑԻ

ՁԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ

I մաս (մինչև 1890 թ.)

Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կարիճի պատկերով:

Բաժանորդագինը ճանապարհածախսով 1 ռուբ. 20 կոպ. կամ 3 Ֆրանկ:

Ռուբլիները ուղարկել թղթագրամով, մանր փողը նամականիշներով (марка):

Դիմել պ. Տիգրան Յովհաննէսեանին հետևեալ հասցէով. Женева, Швейцарія, Т. Н. Іоаннесянцу.

Jenève, Suisse, Rue de Candolle 19, Pension Vivien M. Tigran Ioannissian.

(Ե. Հ.) 3—11

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ

ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ

Հասցէն՝ Красногорская ул. № 14. 13—20

Լոյս է տեսել

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

հեղինակի պատկերով եւ կենսագրական ակնարկով:

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ 2—3

Մի ձեմարանաւարտ, որ ցանկանում է իր ուսումը շարունակել արտասահմանում՝ խնդրում է բարեգործներից օգնել իրան:

Հասցէն „Մշակի" խմբագրութեան մէջ: 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ: Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կայուն քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ դները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրեանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց և Բաղում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով:

35—100



Առևտրական մարկան հաստատված կառավարութիւնից:

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ

պալատի հայթայթողներ

ԹԷՅԻ ԱՌԵՒՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. ՎԻՍՕՑԿԻ ԵՒ ԸՆԿ.

Մօսկվայում.

ԲԱՑՎԱԾ Է Ն. Տ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ից ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Թիֆլիսում

Մայդան, տ. Գ. Ե. ԲԱՅԱՆԴՈՒՐՕՎԻ

Ընկերութեան թէյը ծախու է գտնվում բոլոր լաւ մաղազիններում:



6—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբրայերէով, և եված գէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱԳՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն բուն ամենայն առևտրական ձիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերտանի գործարանական հաշուառութեան:

Բ) Առևտրական թուաբանութիւն:

Գ) Առևտրական նամակագրութիւն:

Դ) Դեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը:

Պարապմունքները սկսվելու են 1900 թի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պատրաստ շարունակվելու են իրարանցիր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն դրատուր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիևսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յարմար դրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը ստանալու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու:

13—20

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ ՊԱՂՏԱՏԻ

Արտասահմանեան ծանօթ զանազան ֆիրմաներից պատրաստված եւ Թիֆլիսի Շերամապահական ուսումնարանում քննված, առաջին կարգի եւ սպիտակ բանդրօլով կնքված

ՊԱՂՏԱՏԻ ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Ծախվում է յարմար գներով Թիֆլիս, Շագինօվի քարավանսարայ, Կ. Ս. Կիլլզէնկեանի մօտ, թիւ 19:

2—5

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ ՊԱՂՏԱՏԻ

ՀԱՅԹԱՏԵՐՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱԼԱՏԻ

1848. 1865. 1892. 1898.

Ա. ՐԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱ.

ՕԾԱՆԵԼԻՔ

ՐՕԵԱԼ-ՐԱԼԼԷ

Հոտաւէտ ջրեր, սապօն և պուդրա

ԾԱՂԿԱՅԻՆ ՕԾԱՆԵԼԻՔ

ՀՈՏԱՒԷՏ ՋՐԵՐ, ՍԱՊՕՆ և ՊՈՒԴՐԱ 6 հոտով.

Շուշան, եասաման, բեղեզա, վիոլետ, պաչուլի, գեղեցարօպ.

3 ԱՌԱՐԿԱՑԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԱՐԿՂԸ 2 ՐՈՒԲԼԻ:

МОСКВА, 1) Пассажъ Солодовникова. 2) Тверская, д. Спиридонова.

С.-ПЕТЕРБУРГЪ, Невскій, 18. М. 59806

Նաև Ռուսաստանի յարմար վաճառներում:

(Հ.) М. 59,806

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 2/14 փետրվարի ՄԻՆԳՐԷԼ, չորեքշաբթի, նաւապետ ՇԻԼՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը. ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՈՎՕՐՕՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առևտրական գործակալութիւն (Ե. Հ. Շ.) 16—20

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձասարի վանքի քարահանքից ամենաընտիր տեսակի «ՂԱՐԱԲԱՂԻ»



ՀՐԱՂԱՅԱՔԱՐԵՐ

ժամանակի գներով և զանազան մեծութեան:

Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.

Որոշեան վերջերս երեացել են նաև ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ չատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ:

29—40 Քարահանքի կապալառու՝ Աբրահամ Հասան Զալալեանց

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Января 1900 г. Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.